

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ՕՐԻՆԱԿՆԵՐ

Օրինակ 3

Աշխատավարձը՝ (200.001-500.000)

- Աշխատավարձ՝ 250 000 դրամ
- Ապահովագրավճար՝ 10 800 դրամ
 - Պետության մասնակցություն՝ 6 000 դրամ
 - Աշխատողից պահվում է՝ 4 800 դրամ
 - Դրոշմանիշային վճար՝ 1 000 դրամ, նախկին 5 500 դրամի փոխարեն
 - Աշխատողի վճարային աշխատավարձը նվազում է 300 դրամով

Մի քանի եկամտի աղբյուր ունեցող անձանց դեպքերը

Օրինակ անձն ունի աշխատավարձ և/կամ միաժամանակ հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, և/կամ աշխատում է մեկից ավել գործատուների մոտ համատեղության կարգով: Այս պարագայում ապահովագրավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել 10.800 դրամը, սակայն յուրաքանչյուր գործատու հաշվարկում է ապահովագրավճարն առանձին-առանձին՝ ըստ իր աշխատավարձի կամ եկամտի մեծության: Աշխատակիցը 1 անգամ դիմում է ներկայացնում Հիմնադրամին՝ նշելով իր բանկային հաշվեհամարը: Ավել հաշվարկված-պահված ապահովագրավճարները 3 աշխատանքային օրվա ընթացքում հետ է փոխանցվում տվյալ աշխատակցի բանկային հաշվին:

2026 թվականի հունվար ամսվանից սկսած որևէ ամսվա արդյունքով աշխատավարձը՝ յուրաքանչյուր գործատուից 200.001 դրամ և ավելի կազմելու դեպքում, ապահովագրավճարները շարունակվում են հաշվարկվել սույն օրենքով սահմանված կարգով՝ անկախ հաջորդող 12 ամիսների ընթացքում աշխատավարձի նվազեցումից:

Օրինակ 4

Աշխատավարձը՝ (500.001-1.000.000)

- Աշխատավարձ՝ 550 000 դրամ
- Ապահովագրավճար՝ 10 800 դրամ, որն ամբողջությամբ վճարում է աշխատողը
 - Դրոշմանիշային վճար՝ 1 000 դրամ, նախկին 8 500 դրամի փոխարեն
 - Աշխատողի վճարային աշխատավարձը նվազում է 3 300 դրամով

Օրինակ 5

Աշխատավարձը՝ (1.000.001-ավել)

- Աշխատավարձ՝ 1 150 000 դրամ
- Ապահովագրավճար՝ 10 800 դրամ, որն ամբողջությամբ վճարում է աշխատողը
 - Դրոշմանիշային վճար՝ 15 000 դրամ, մնում է անփոփոխ
 - Աշխատողի վճարային աշխատավարձը նվազում է 10.800 դրամով



ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿ

Առողջության համընդհանուր
ապահովագրության մասին օրենքի կիրարկման

Ապահովագրված անձ՝ ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ անձիք		Ֆինանսավորման աղբյուր և վճարման ժամկետներ	Ժամկետները
Վարձու աշխատողները, որոնց աշխատավարձը 2025 թվականի նոյեմբեր ամսվա համար կազմել է	200.001- 500.000	Ամսական 4.800 ՀՀ դրամ աշխատողի աշխատավարձից, մինչև հաջորդ ամսվա 20-ը ներառյալ	01.12.2025 թ.
	500.001-ից ավել	Ամսական 10.800 ՀՀ դրամ աշխատողի աշխատավարձից, մինչև հաջորդ ամսվա 20-ը ներառյալ	
Անհատ ձեռնարկատերեր և նոտարներ՝ 2025 թվականի տարեկան իրացման շրջանառությունը կազմել է	2.400.001-ից ավել	Տարեկան 129.600 ՀՀ դրամ, մինչև 20.04.2026թ.-ը ներառյալ	
Եթե որևէ ամսվա արդյունքով աշխատողի աշխատավարձը չի բավարարում (այդ թվում՝ տվյալ ամսում աշխատավարձ չհաշվարկվելու դեպքում) ապահովագրավճարի հաշվարկման և վճարման համար	Անկախ աշխատ- վարձի մեծությունից	4.800 ՀՀ դրամ գործատուի միջոցների հաշվին	
Օրենքով սահմանված կարգով սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող ապահովագրված անձինք կարգավիճակը ստանալուց հետո 12 ամիսների ընթացքում	200.001- 500.000	Ամսական 10.800 ՀՀ դրամ աշխատողի միջոցների հաշվին, որից՝ - 6.000 ՀՀ դրամ ինքնուրույն - 4.800 ՀՀ դրամ աշխատողի աշխատավարձից	

Առողջության համընդհանուր ապահովագրության շահառուները	Ապահովագրավճարի վճարման պարբերականությունը	Ապահովագրավճարի չափը	Որ հաշվետվությունում է արտացոլվելու	Ժամկետներ
Վարձու աշխատող	Ամսական	10 800	Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկի մեջ	Հաջորդ ամսվա 20-ը ներառյալ
Անհատ ձեռնարկատեր և/կամ նոտար	Տարեկան	129 600	Ա/Ձ-ի և նոտարի սոցիալական վճարի հաշվարկում և/կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության մեջ իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության և/կամ շրջանառության հարկի հաշվարկներում և/կամ շահութահարկի հաշվարկում	Հաջորդ տարվա ապրիլի 20-ը ներառյալ

ԱՀԱ-ի ներդրման արդյունքում 2025-2026 թվականների վճարային (մաքուր) աշխատավարձերի տարբերությունները											
Շենքեր	Հաշվարկային աշխատավարձ	Եկամտային հարկ (20%)	Նպատակային սոց. վճար	Դրոշմանիշային վճար		Ապահովագրավճար			Վճարման ենթակա աշխատավարձ		Տարբերություն
				մինչև 01.12.2025	01.12.2025 հետո	Ընդհանուր	Պետական բյուջե	Աշխատող	մինչև 01.12.2025	01.12.2025 հետո	
200.001-500.000	250.000	50.000	12.500	5.500	1.000	10.800	6.000	4.800	182.000	181.700	- 300
500.001-1.000.000	550.000	110.000	30.000	8.500	1.000	10.800	0	10.800	401.500	398.200	- 3.300
1.000.001- ավել	1.150.000	230.000	87.500	15.000	15.000	10.800	0	10.800	817.500	806.700	- 10.800

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Օրինակ 1

Աշխատավարձը՝ (0-100.000)

Աշխատավարձ՝ 90 000 դրամ

- Ապահովագրավճար չի հաշվարկվում
- Դրոշմանիշային վճար՝ 1 000 դրամ, նախկին 1 500 դրամի փոխարեն
- Աշխատողի վճարային աշխատավարձն ավելանում է 500 դրամով



Օրինակ 2

Աշխատավարձը՝ (100.001-200.000)

Աշխատավարձ՝ 200 000 դրամ

- Ապահովագրավճար չի հաշվարկվում
- Դրոշմանիշային վճար՝ 1 000 դրամ, նախկին 3 000 դրամի փոխարեն
- Աշխատողի վճարային աշխատավարձն ավելանում է 2000 դրամով

